

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-96-Ա կարգադրությամբ, ի թիվս այլ միջոցառումների, նախատեսվեց ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի մշակումը:

Ղեկավարվելով հիշյալ իրավական հիմքով ՀՀ արդարադատության նախարարությունը Եվրոպական միության և Եվրոպական խորհրդի Երևանյան գրասենյակի Երևանյան գրասենյակի աջակցությամբ կազմավորեց Հանրապետության վարչազետների հանձնախումբ, որոնք շուրջ երկու տարի՝ ՀՀ արդարադատության նախարարության անմիջական համակարգմամբ ներգրավված են ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի մշակման աշխատանքներում: Նախագիծը բազմիցս դարձել է հանրային և մասնագիտական քննարկումների նյութ, ներկայացվել է միջազգային ճանաչում ունեցող վարչական իրավունքի փորձագետների փորձաքննությանը: Բնորոշ է այն, որ քննարկման դրված վերջնական տարբերակի առնչությամբ միջազգային փորձագետների¹ կողմից 2016 թ. հուլիսին տրվել է աննախադեպ բարձր գնահատական. «Ինչպես արդեն նշվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծի վերջնական գնահատման շրջանակներում, ներկայումս այն իրենից ներկայացնում է վարչական իրավախախտումների ժամանակակից, արդարացի Եվրոպական իրավական համակարգի բաղադրիչ: Այն արդար և հավասար կերպով պաշտպանում է վարության իրավունքները, սահմանում է ընդունելի նյութական իրավունքի դրույթներ, որոնք առնչվում են օրինականության սկզբունքին և բավականին հանգամանորեն կառուցված

¹ Փորձագետներն են դոկտոր, պրոֆեսոր Բաքմայր-Վինթերը՝ Իսպանիայի Թագավորության Մադրիդի Կոմպլուտենսեի Համալսարանից և Փիթեր Պավլին՝ Սլովենիայի արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարը:

են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթները: ... Այս նախագիծը կարող է դառնալ եվրոպական վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերի ընտանիքի մաս, լինել եվրոպական բազմաթիվ համակարգերի, օրինակ՝ Ավստրիայի և Գերմանիայի համակարգերի նման»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք ծանրակշիռ փաստարկներով:

Անցման ժամանակաշրջանում սա այն եզակի հիմնարար օրենսդրական ակտերից է, որը երբևէ համակարգված քննարկման առարկա չի դարձել և ընդգրկված չի եղել իրավական բարեփոխումների ծրագրերում, այսինքն՝ ըստ էության, բացակայում էր այդ ոլորտի օրենսդրական կարգավորման որևէ ամփոփ հայեցակարգ, որը կկանխորոշեր հետագա օրենսդրական զարգացումները: Արդյունքում՝ ոլորտը կանոնակարգող օրենսդրական ակտերում պարբերաբար անխուսափելիորեն կատարվել են տարաբնույթ, երբեմն էլ անհարկի իրարամերժ ու հակասական փոփոխություններ, լրացումներ, ինչպես նաև ընդունվել են նոր օրենսդրական ակտեր, որոնք հիմնականում առաջադրել են իրավիճակային լուծումներ, հընթացս էլ ավելի խրթին դարձնելով իրավակիրառ պրակտիկան: Նկատենք, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքն ընդունվել է դեռևս 1985թ. դեկտեմբերի 6-ին և, թերևս, ամենաշատն է ենթարկվել փոփոխությունների ու լրացումների:

Հայեցակարգային մոտեցումների բացակայության պայմաններում ստեղծվել է մի վիճակ, երբ ոչ միայն օրենսգրքում, այլև դրանում կատարված փոփոխություններում անհարկի մեծ քանակ են կազմում միջազգային իրավական չափանիշներին, այդ թվում՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի դրույթներին հակասող նորմերը՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ:

Ներկա տեսքով ոլորտին առնչվող հասարակական հարաբերությունների կարգավորմանը նվիրված օրենսդրական ակտերը չեն բավարարում միասեռ

հարաբերությունների կարգավորման միասնականության նվազագույն պահանջներին և որևէ հիմքով համակարգված չեն:

Գործող օրենսդրության առկա բազմաթիվ թերություններից ու բացթողումներից, թերևս կարելի է առանձնացնել հետևյալները՝

- օրենսդրական ակտերում (հատկապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում) դեռևս առկա են այնպիսի ակնհայտ անհիմն ու անհարկի հասկացություններ, ինչպիսիք են «ԽՍՀՄ համակարգը», «սոցիալիստական սեփականությունը», «սոցիալիստական օրինականությունը», «վարչական իրավախախտումների մասին ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը» և այլն: Ընդ որում, խնդիրը բնավ խմբագրական հարթության վրա չէ. նախկինում փորձ արվել է դրանք տեքստից հեռացնելու, սակայն խոսքը կոնկրետ պետական մարմինների մասին է, որոնց պարագայում հարկ է հստակ որոշել, թե ներկայումս դրանց որ մարմինները պետք է փոխարինեն և ինչ սահմաններում.

- ի տարբերություն քրեական պատասխանատվության, վարչական պատասխանատվության սուբյեկտներ կարող են լինել նաև իրավաբանական անձինք, ինչն ինքնին ողջունելի է, սակայն դրանցում, որպես կանոն, բացակայում են վարույթին առնչվող իրավական նորմեր, իսկ եղածն էլ բավարար չէ ոլորտում ծագող հարցադրումներին ամբողջական լուծում տալու համար: Բնորոշ է նաև այն, որ իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենսդրական ակտերը դասակարգված են՝ ըստ կառավարման ոլորտների, ինչի արդյունքում կամ դրանք անհարկի կրկնում են միմյանց, կամ՝ պարունակում են անհարկի հակասություններ: Ստացվում է, որ ներկայումս գործում են վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի բազմաբնույթ արհեստական առանձնահատկություններ, որոնք որևէ կերպ պայմանավորված չեն կառավարման տվյալ ոլորտով: Մյուս կողմից, ներկայումս աշխատանքներ են տարվում նաև քրեական օրենսգրքի նախագծի մշակման ուղղությամբ, իսկ արդեն շրջանառության մեջ դրված նախագծում նախապատվությունը տրվել է իրավաբանական անձանց ևս քրեական

պատասխանատվության սուբյեկտ ճանաչելու դիրքորոշմանը: Այս հարցադրումների համատեքստում խնդիր է դրվել այնպիսի կարգավորումներ ապահովել, որպեսզի բացառվեն իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտի անհարկի կրկնությունները.

- ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց վերաբերյալ վարչական իրավախախտումներին առնչվող օրենսդրությունում բացակայում են վարույթին բնորոշ այնպիսի ակնհայտ անհրաժեշտ ինստիտուտներ, ինչպիսիք են վարույթի կասեցումը, կարճումը, նորոգումը և այլն: Գործնականում այս ակնհայտ թերություններն ու բացերը հանգեցնում են փակուղային իրավիճակների, ինչի արդյունքում էապես վատթարանում է ոչ միայն վարչարարության որակը, այլև չի երաշխավորվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության բնականոն ընթացքը:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ կասեցման ինստիտուտը, լինելով անչափ անհրաժեշտ վարութային բաղադրիչ, կարող է նաև էական չարաշահումների տեղիք տալ և հանգեցնել անթույլատրելի ձգձգումների, նախագծում առաջադրվել են բացառապես այնպիսի լուծումներ, որոնք ոչ միայն պարզապես համահունչ են միջազգային իրավական չափանիշներին, այլև ձևավորված իրավական մշակույթի հաշվառմամբ, ներառում են այնպիսի լուծումներ, որոնք հնարավորինս միտված են այդ ինստիտուտի արդյունավետ կիրառմանը.

- բացակայում է տրամաբանական ներքին կապը՝ քրեական և վարչական պատասխանատվության ինստիտուտների միջև. հաճախ միևնույն իրավախախտումը միաժամանակ ամրագրված է, և որպես վարչական զանցանք, և որպես քրեական հանցագործություն: Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի ընդունմամբ (գործողության մեջ է դրվել 2003թ. օգոստոսի 1-ից), սկզբնական շրջանում բացառվեց որոշ վարչական զանցանքներ կրկնակի կատարելը քրեական հանցագործություն համարելու գաղափարը, ինչն ընդունելի էր նախկին քրեական օրենսգրքով: Մինչդեռ, հետագայում հիշյալ մոտեցումը, այնուամենայնիվ, կիրառման

մեջ դրվեց, անտեսելով, սակայն միասնական իրավական չափանիշներով ղեկավարվելու անհրաժեշտությունը:

Երբեմն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդվածներով սահմանված սանկցիաներն ավելի խիստ են, քան Քրեական օրենսգրքի որոշ հոդվածներով սահմանված սանկցիաները: Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի և Քրեական օրենսգրքի միջև պետք է կատարվի սանկցիաների հստակ սահմանազատում՝ ելնելով իրավախախտումների հանրային վտանգավորության աստիճանից:

Միաժամանակ, ելակետ է ընդունվել այն մոտեցումը, որ հետագա օրենսդրական զարգացումների փուլում, այնուամենայնիվ, չեն բացառվի անհարկի կրկնությունները, ուստի նախապատվությունը տրվել է միջազգային իրավական այն չափանիշին, ըստ որի՝ միևնույն արարքը վարչական զանցանք և քրեական հանցագործություն նախատեսելու դեպքում, այն դիտարկվում է, որպես հանցագործություն.

- վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության էվոլյուցիան առայժմ ընթացել է մեկուսացված. մասնավորապես այդ ոլորտին վերաբերող բազմաթիվ օրենսդրական ակտեր որդեգրել են միանգամայն նոր դրույթներ, որոնք, թեպետ վերաբերում են վարչական պատասխանատվության ինստիտուտին, սակայն որևէ կերպ չեն արտացոլել այդ ինստիտուտի օրենսդրական դրույթները և ամրագրել են միմյանցից խիստ տարբերվող մոտեցումներ:

Դրան զուգահեռ վերջին երկու տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում ընդունվեցին մի քանի տասնյակ օրենքներ, որոնց տարբեր դրույթներ վարչական պատասխանատվություն են սահմանում տարբեր վարչական զանցանքների կատարման համար: Ընդ որում, նշված օրենքներով հաճախ սահմանվում է վարչական պատասխանատվություն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով արդեն իսկ նախատեսված արարքների կատարման համար՝ դրանց համար սահմանելով վարչական պատասխանատվության տարբեր միջոցներ կամ չափեր.

- վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենսդրությունում առկա են միջազգային իրավական չափանիշներին ակնհայտ հակասող տարաբնույթ ինստիտուտներ, որոնք հարկ է լինում վերացնել նաև միջազգային իրավասու կառույցների միանգամայն իրավաչափ միջամտության արդյունքում (բնորոշ է վարչական կալանքը, որպես վարչական տույժի միջոց կիրառելը): Ընդ որում, այդպիսիք գործում են նաև ներկայումս: Հավելենք նաև, որ հիշյալ մոտեցումները էապես տարբերվում են քրեական պատասխանատվության նույնասեռ ինստիտուտների առնչությամբ կիրառվող մոտեցումներից: Արդյունքում ստացվում է, որ միևնույն ինստիտուտի առնչությամբ կիրառման մեջ են դրվել միմյանցից սկզբունքորեն տարբերվող դիրքորոշումներ.

- վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրական ակտերը համակարգված չեն: Ընդ որում, այդ թերությունը հատկապես լայն տարածում ունի իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենսդրական ակտերում, որոնք, որպես կանոն, նվիրված են կառավարման այս կամ այն ոլորտում իրավահարաբերությունների կանոնակարգմանը և սուկ մասնակիորեն պարունակում են վարչական իրավախախտումների վարույթին նվիրված որոշ իրավական նորմեր:

Հիշյալ բացթողումները միայն չնչին մասն են կազմում, գործնականում դրանք անհամեմատ շատ են, ինչը ներկայիս իրավական համակարգի շրջանակներում բնորոշ չէ որևէ իրավական ինստիտուտի: Ստեղծված իրավիճակը, թերևս, պայմանավորված է այն հանգամանքով, որ Եվրոպական բազմաթիվ երկրներում վարչական զանցանքները դիտարկվում են, որպես քրեական հանցագործությունների տարատեսակներ՝ «քրեական զանցանք» անվանումով և ներառված են քրեական օրենսգրքերում: Բոլոր այն դեպքերում, երբ վերանայվել է քրեական օրենսդրությունը, ցավոք, անտեսվել է հիշյալ իրողությունը, ինչի արդյունքում, ուսումնասիրելով միջազգային փորձը, կամ որոշ քրեական զանցանքներ ներառվել են քրեական օրենսգրքի նախագծում, որպես արդեն քրեական հանցագործություններ կամ պարզապես ապաքրեականացվել են: Ընդ որում, մշակելով ինքնուրույն քրեական օրենսգրքի նախագիծ, բավարար

ուշադրություն չի դարձվել այն իրողությանը, որ մի շարք հողվածներ, ըստ էության, կրկնում են արդեն իսկ գործող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նորմերը: Առնվազն հիշյալ երկու օրենսդրական ակտերը պետք է քննարկվեին միաժամանակ, որպեսզի համադրման մեթոդաբանությամբ բացառվեին կրկնությունները և երաշխավորվեր մոտեցումների միասնականությունը, ինչը չի արվել:

Այս Օրենսգրքի նախագծի շահեկան առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այն մշակվել ու քննարկման է դրվել քրեական օրենսգրքի նախագծի հետ զուգահեռ, ՀՀ արդարադատության նախարարության աջակցությամբ ու ղեկավարությամբ տեղի են ունեցել մշակման հանձնախմբերի աշխատանքային հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկման առարկա են դարձել վերոհիշյալ հարցադրումները:

Օրենսդրության մեջ տեղ գտած լուրջ բացթողումները խիստ բացասաբար են անդրադառնում ինչպես մարդու իրավունքների և ազատությունների և իրավաբանական անձանց օրինական շահերի պաշտպանության երաշխավորվածության, նշված ոլորտում պետական կառավարման, ինչպես նաև վարչական զանցանքների վերաբերյալ գործերով արդարադատության իրականացման արդյունավետության վրա: Բնորոշ է, որ օրենսդրության հիշյալ բացթողումների պարագայում իրավասու պաշտոնատար անձինք հաճախ ղեկավարվում են ոչ թե կոնկրետ իրավական դրույթներով, այլ՝ հայեցողական որոշումներով: Մտահոգող է նաև այն, որ վարույթի համար սահմանված բազմաթիվ անհարկի առանձնահատկությունները գործնականում խիստ բարդացնում են գործառույթների իրականացման բնականոն ընթացքը, անխուսափելի դարձնում անհարկի ֆինանսական և մարդկային ծախսեր պահանջող յուրաքանչյուր ոլորտին համապատասխան մասնագիտական լրացուցիչ պատրաստվածություն անցնելու անհրաժեշտությունը և այլն:

Վարչական պատասխանատվության ինստիտուտը ներկայումս կիրառում ունի որոշ նախկին հետխորհրդային պետություններում, սակայն այդ ինստիտուտը ենթարկվել է էական բարեփոխումների, գրեթե ամբողջովին համապատասխանեցվել է միջազգային իրավական չափանիշներին և գրեթե ընդհանուր ոչինչ չունի այն

հիմնադրույթների հետ, որոնք ամրագրված են, մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գործող օրենսգրքում:

Այսպիսով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծում արտացոլված են հետևյալ նորամուծությունները՝

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի առանձնահատկություններից ելնելով սկզբունքներն ընդլայնվել են և ներառվել են այնպիսի սկզբունքները, որոնք սահմանված չեն նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով: Այս նորամուծության արդյունքում վարչարարությունն այս չափազանց բարդ ոլորտում կդառնա առավել կանխատեսելի ու զերծ կպահի այն այնպիսի իրավիճակներից, որոնք հաճախ անորոշ են և չունեն ուղղորդող լուծումներ:

2. Սահմանվել են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց պատասխանատվությանն առնչվող դրույթները: Մասնավորապես, իրավաբանական անձինք սահմանվել են որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ: Իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտը բնավ երիտասարդներից չէ, սակայն իրավական կարգավորման ընդգրկվածությամբ դեռևս էապես զիջում է ֆիզիկական անձանց պատասխանատվության ինստիտուտին: Իսկ տնտեսության ազատականացման զարգացումներին զուգընթաց անխուսափելիորեն մեծ արդիականություն են ձեռք բերել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդիրը: Սակայն, ներկայիս վարչական պատասխանատվության օրենսդրության և իրավական ոչ համարժեք պատկերացումների անկատարության պարագայում, դեռևս բավարար չափով լուծված չեն իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնահարցերը: Իրավաբանական անձինք որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ հանդես են գալիս մերձբալթյան երկրների, ԱՊՀ մի շարք այլ երկրների օրինակ՝ Մոլդովայի, Ղազախստանի, Բելառուսի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ, իսկ եվրոպական երկրներից՝ Իտալիայի, Գերմանիայի, Բուլղարիայի,

Ավստրիայի օրենսդրությամբ: Բազմաթիվ երկրներում, որոնք ունեն արարքների (իրավախախտումների) տեսակները և դրանց համար նախատեսված պատասխանատվության միջոցները սահմանող մեկ միասնական ակտ՝ հանձինս քրեական օրենսգրքի, իրավաբանական անձինք հանդիսանում են նաև քրեական պատասխանատվության, իրավահամեմատական տեսանկյունից նաև՝ վարչական պատասխանատվության սուբյեկտ:

Մասնավորապես նախագծում կարգավորված են հետևյալ հիմնարար նշանակություն ունեցող դրույթները:

ա. Եթե իրավաբանական անձի նկատմամբ նշանակվել է վարչական պատասխանատվություն, ապա դա չի ազատում պատասխանատվությունից տվյալ զանցանքի կատարման համար մեղավոր ֆիզիկական անձին և հակառակը, եթե ֆիզիկական անձի նկատմամբ նշանակվել է վարչական պատասխանատվություն, ապա դա չի ազատում տվյալ զանցանքի կատարման համար վարչական պատասխանատվությունից իրավաբանական անձին: Այսպես, ամրագրվել են իրավաբանական անձի և ֆիզիկական անձի միաժամանակյա պատասխանատվություն նախատեսելու համար որոշակի չափանիշներ: Ընդ որում, նախագծում առկա են բավարար ելակետային դրույթներ, որոնք հիմնավորում են միջազգային չափանիշներին համապատասխանող այդպիսի դիրքորոշման իրավաչափությունը:

բ. Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը կարող է տարածվել նաև իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունների, մասնավորապես՝ ներկայացուցչությունների և մասնաճյուղերի վրա, քանի որ «իրավաբանական անձ» եզրույթը վարչական իրավունքում չի կարող ընկալվել այն իրավական նշանակությամբ, ինչը բնորոշ է քաղաքացիական իրավունքին: Արտասահմանյան երկրների օրենսդրությունը նախատեսում է հանրային պատասխանատվություն ինչպես այն կոլեկտիվ սուբյեկտների համար, որոնք ունեն որևէ կազմակերպական կարգավիճակ, այնպես էլ այն սուբյեկտների համար, որոնք չունեն որևէ կազմակերպական-իրավական կարգավիճակ: Իսկ մասնաճյուղերն ու ներկայացուցչություններն օժտված են այնպիսի հատկանիշներով, որոնք թույլ են նրանց

ինքնուրույն պատասխանատվություն կրել: Գործնականում այս հարցի առնչությամբ առկա շփոթը հաղթահարելու համար դեռևս 2016 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխություններում, թերևս, առաջին անգամ գործածվեց «հանրային իրավունքի իրավաբանական անձ» եզրույթը, ինչը նախկինում երբևէ չի կիրառվել հայրենական իրավական համակարգում, իրավական մշակույթում և, ցավոք, նաև իրավագիտական հետազոտություններում: Այս նորամուծությամբ փորձ է արվում ոչ միայն նոր եզրույթներ դնել շրջանառության մեջ, այլև իրավական համակարգը դարձնել առավել համահունչ միջազգային իրավական չափանիշներին և բացառել նույն այդ եզրույթների անհարկի սահմանափակ բովանդակությամբ կիրառելու անընդունելի պրակտիկան:

գ. Քննարկվել և լուծում է տրվել նաև իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդիրներին՝ իրավաբանական անձանց վերակազմակերպման դեպքում: Ինչևէ, տարաբնույթ մոտեցումներից խուսափելու և կանխատեսելի ու դյուրին վարչարարություն երաշխավորելու տեսանկյունից նախապատվությունը տրվել է իրավահաջորդության սկզբունքով պատասխանատվությանը:

դ. Իրավաբանական անձանց նկատմամբ սահմանվել են վարչական տույժի հետևյալ տեսակները՝

- 1) նախազգուշացում,
- 2) վարչական տուգանք,
- 3) լիցենզիայի (թույլտվության) գործողության կասեցում,
- 4) լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցում,
- 5) վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում,
- 6) որոշակի տեսակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում,
- 7) իրավաբանական անձի գործունեության դադարեցում:

Իրավահամեմատական վերլուծության արդյունքում Նախագծում սահմանվել է իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի, թերևս, ամբողջական

շրջանակ, ինչը համահունչ է ոչ միայն այլ երկրների վարչական, այլև քրեական օրենսդրությանը:

3. Սահմանվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի միասնական կանոններ և պայմաններ, ինչը բխում է անձանց իրավահավասարության և տնտեսական ազատ մրցակցության սահմանադրական սկզբունքների պահանջներից: Հատուկ վարույթներ, այսինքն՝ առանձնահատուկ կանոններով վարույթներ սահմանվել են միայն այն դեպքում, երբ դրանք թելադրված են եղել վարույթի օբյեկտիվ նախադրյալներով և կարող են նպաստել պատշաճ վարչարարության սահմանադրական սկզբունքի իրացմանը:

4. Վերացվել են քրեական դատավարության և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի կանոնների միջև առկա անհարկի տարբերությունները, ինչը կնպաստի այդ համասեռ վարույթների նկատմամբ միասնականության ապահովմանը: Ընդ որում, առանձնահատուկ ուշադրություն է դարձվել կասկածյալների իրավունքների ընդլայնման և պաշտպանության խնդիրներին, որոնց լուծման կարևորագույն գրավական է համարվել պաշտպանի լիազորությունների աննախադեպ ընդլայնումը:

5. Ներմուծվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթում վերջինիս բնականոն ընթացքն ապահովող և անձանց իրավունքները երաշխավորող իրավական համարժեք ինստիտուտներ: Այդպիսիք են, օրինակ, վարույթի կասեցումը, կարճումը, վարչական հարկադրանքի հիմքերի և կիրառման պայմանների ու սուբյեկտների շրջանակի հստակեցումը, կատարելագործվել են նաև բողոքարկման վարույթին վերաբերող դրույթները:

6. Ապահովված է վարչական զանցանքների հիմնավորված դասակարգումը և դրանց համար նախատեսված սանկցիաների ներդաշնակությունը, միևնույն հետևանքներ ունեցող զանցանքների համար վարչական տույժերի միատեսակ կիրառումը:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների համահունչ պահպանվել է պատասխանատվության միջոցների ու չափերի համամասնությունը:

Մասնավորապես, հիմք է ընդունվել այն դիրքորոշումը, ըստ որի՝ նվազագույն աշխատավարձին մոտ չափով տուգանքի չափեր սահմանելիս պարտադիր ամրագրվում են նվազագույն և առավելագույն չափեր:

7. Կատարելագործվել են վարչական հարկադրանքի օժանդակ միջոցները՝ համապատասխանեցնելով դրանք իրավական պետության պահանջներին: Որպես վարչական կանխարգելիչ միջոցներ սահմանվել է վարչական ձերբակալումը, գույքի արգելադրումը, դաստիարակչական հսկողությունը, հարբածության վիճակի հարկադիր ստուգումը և այլն: Ընդ որում, երաշխավորված է այն անձի իրավունքը, ում նկատմամբ կիրառվում է վարչական հարկադրանքի միջոց: Վերջինս ոչ միայն կարող է իր հայեցողությամբ պարզապես վարչական կամ դատական կարգով բողոքարկելու այդ որոշումը, այլև վստահ լինել, որ իրավական հիմքերով թույլ չի տրվելու որևէ կամայականություն:

8. Ձերբակալված անձը չի կարող անազատության մեջ պահվել 3 ժամից ավել: Վարչական ձերբակալման ժամկետը հաշվարկվում է անձին ազատությունից փաստացի զրկելու պահից: 3 ժամից ավելի տևողությամբ ժամկետով, բայց ոչ ավել քան 48 ժամը, կարող են ձերբակալվել՝

1) ոչ սթափ վիճակում գտնվող անձինք՝ մինչև սթափվելը.

2) սահմանային կամ մաքսային ռեժիմը կամ պետական սահմանի անցման կետերի ռեժիմը խախտող անձինք՝ մինչև ինքնությունը պարզելը:

Արմատապես վերանայվել են վարչական ձերբակալման հիմքերը: Մասնավորապես, դրանք ոչ միայն ճշգրտորեն համապատասխանեցվել են ՀՀ Սահմանադրության հիմնադրույթներին ու դրանց առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներով ամրագրված իրավական դիրքորոշումներին, այլև առաջադրվել են այնպիսի լուծումներ, որոնք սկզբունքորեն կբացառեն մարդու անհիմն անազատության մեջ պահելու դեպքերը: Այսպես, օրինակ, նախագծով սուսկ անձի ինքնությունը պարզելու համար ձերբակալումը չի դիտարկվել իբրև իրավաչափ, այլ առաջադրվել է ՀՀ Սահմանադրության հիմնադրույթներին համապատասխան այնպիսի կարգավորում, որի հիմքով անձին հնարավոր կլինի ձերբակալել այն

դեպքում, երբ վերջինս կատարել է վարչական զանցանք կամ այն կատարելիս չի ենթարկվում դադարեցնելու վերաբերյալ օրինական պահանջներին և, չունենալով ինքնությունը հաստատող փաստաթուղթ, կարող է փախուստի դիմել:

9. Որպես վարչական հարկադրանքի միջոց սահմանվել է նաև գույքի արգելադրումը, դաստիարակչական հսկողությունը, տրանսպորտային միջոց վարելուց հեռացնելը և (կամ) տրանսպորտային միջոցը հատուկ տարածք բերման ենթարկելը, սթափության վիճակի զննությունը: Իսկ վարչական իրավախախտմամբ ձեռքբերված գույքի բռնագրավվումը որպես վարչաիրավական ներգործության այլ միջոց:

10. Ընդհանրապես, վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի կանոններ սահմանելիս, ընդունելի է դիտարկվել այն տարբերակը, որ վերջինս լինի հնարավորինս սպառիչ, որ միայն ծայրահեղ դեպքերում անհրաժեշտություն ծագի իրավակիրառ պրակտիկայում կիրառել նաև վարչարարության այլ իրավական աղբյուրները, որպեսզի իրավասու պաշտոնյաները հարկադրված չլինեն յուրաքանչյուր դեպքում անդրադառնալու այն հարցին, թե այս կամ այն հարաբերության կարգավորմանը նվիրված օրենսդրական ակտերից որին կարող են նախապատվությունը տալ և ինչ հիմքերով:

11. Վերանայվել են օրենսդրական ակտերն այն կտրվածքով, որպեսզի վերջիններումս բացառվեն անհարկի կրկնություններն ու հակասությունները, ինչը կնպաստի իրավակիրառ գործունեության բնականոն իրականացմանը: Խոսքը տվյալ դեպքում ոչ միայն քրեական օրենսդրության, այլև վարչական իրավունքի մյուս աղբյուրների մասին է: Այս Նախագծում նախապատվությունը տրվել է հետևյալ մոտեցմանը. բոլոր այն օրենսդրական ակտերը, որոնք այս կամ այն չափով բովանդակում են վարչական իրավախախտումների վերաբերյալ դրույթներ, համակարգված վերանայվում են, որպեսզի նաև իրավակիրառող պաշտոնյան կարողանա օգտվել բացառապես մեկ օրենսդրական ակտից և ավելորդ քննարկման նյութ չդարձնի միևնույն հարաբերության կարգավորմանը նվիրված օրենսդրական ակտերում առկա հակասությունների պարագայում իրավաչափ ելք փնտրելու խնդիրը:

Այսպիսով, այս օրենսգրքի նախագիծը իրենից ներկայացնում է այդ ոլորտի բոլոր իրավահարաբերությունների կանոնակարգմանը նվիրված մեկ ամբողջական կողիֆիկացված իրավական փաստաթուղթ: